

ՀԱՄԱԳՈՐԾԱԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՎԻԹԽԱՐԻ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ «ԸՆԶԵՆԱՎՈՐԸ» ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ԳՐՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ



Հոկտեմբերի 9-ին, Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում, կայացավ Ֆրանկֆուրտի գրքի շուկայի շաբաթյակի պաշտոնական բացման արարողությունը: Միջոցառմանը Վրաստանը մասնակցում է պատվավոր հյուրի կարգավիճակով:

Ֆրանկֆուրտի գրքի շուկայի շաբաթյակի պաշտոնական բացումից հետո, կայացավ պատվավոր հյուր երկրի՝ Վրաստանի տաղավարի բացման արարողությունը, որին ներկա էին Վրաստանի վարչա-

Միջոցառմանը ներկա էր նաև Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, Հայաստան վերադառնալուց պես, խորհրդակցություններ է նախաձեռնել կառավարության եւ Ազգային ժողովի ղեկավարության հետ:



Այդ շրջանակում, Հայաստանի նախագահին իր նստավայրում հանդիպումներ է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի հետ:

Արմեն Սարգսյանի եւ Նիկոլ Փաշինյանի հանդիպմանը քն-

նարկվել են Հայաստանի ներքաղաքական իրավիճակին ու զարգացումներին, այդ թվում՝ խորհրդարանական արտահերթ ընտրությունների անցկացմանն առնչվող հարցեր:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՊԵՏՐՅՈՒՋԵ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է ԳՐԵԹԵ 13 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ ԳՈՒՄԱՐՈՎ

2019 թվականի Վրաստանի պետական բյուջեն սահմանվել է 12.729.700.000 լարի գումարի չափով: Վերոնշյալը երկրի ֆինանսական փաստաթղթի նախնական տարբերակն է, որը կառավարության կողմից արդեն ներկայացվել է խորհրդարանին:

Փաստաթղթում նշված է, որ 2019 թվականին տնտեսական աճը կանխանշված է 4,5 տոկոսի չափով:

«Հաջորդ տարվանից աստիճանաբար ավելանալու է տնտեսական աճի ցուցանիշը, եւ 2020 թվականին այն կազմելու

է 5 տոկոս, 2021 թվականին՝ 5,5, իսկ 2022 թվականին՝ 6 տոկոս»,- ասված է պետական բյուջեի նախագծի բացատրական թերթիկում:

Պետբյուջեի նախնական տարբերակի համաձայն, 2019 թվականին համախառն ներքին ար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԹԵՄ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՐԵՅ ԶՐԱՆԿՈՑՈՒՄՅԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

ՎԱՅՑԵՆ Է ՆԱԵՎ ՆՐԱ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Վրաստանի արդարադատության նախարար Թեմ Ծուլուկիանին Վրաստանը ներկայացրեց Երեւանում անցկացվող Ֆրանկֆուրտի 17-րդ գագաթաժողովում, որին մասնակցում էին շուրջ 40 երկրի նախագահները, վարչապետները, նախարարները: Գագաթաժողովն ընդունեց հռչակագիր, որտեղ մասնակից երկրների ներկայացուցիչներն իրենց ստորագրություններով վավերացրին Վրաստանի տարածքային անբողջականության պաշտպանությունը: Ինչպես նշեց Թեմ Ծուլուկիանին, Երեւանյան գագաթաժողովի հուշագիրը ուրախակի ու արտակարգ ողջունելի փաստ է:



Երեւանում Թեմ Ծուլուկիանին հանդիպումներ ունեցավ միջոցառմանը մասնակից Աֆրիկայի եւ Ասիայի առանձին երկրների նախարարների հետ:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ «ԷԹԻՎԱՅԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ»



Հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրությունների մասնակից 25 թեկնածուներից 20-ը, հոկտեմբերի 7-ի դրությամբ, ստորագրել են «Էթիկայի սկզբունքները» անվամբ փաստաթուղթը:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան: Նրա խոսքով, «Էթիկայի սկզբունքների» հետ համաձայն են բոլոր թեկնածուները եւ, բնականաբար, հավանական է, որ առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում այն կստորագր-

վի բոլոր թեկնածուների կողմից: - Նախագահության բոլոր թեկնածուները կան ներկայացուցիչները ներգրավված էին «Էթիկայի սկզբունքների» մշակման գործընթացին եւ հայտարարեցին, որ պատրաստ են միանալ այդ փաստաթղթին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀՐԱԺԵՇՏ


ԱՇԽԱՐՀԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻՆ

Հոկտեմբերի 6-ին Ֆրանսիան եւ աշխարհը հրաժեշտ տվեց հանրահռչակ շանտոնյե, երգիչ ու երգահան, Հայաստանի ազգային հերոս, Ֆրանսիայի «Պատվո լեգիոն» շքանշանի ասպետ Շառլ Ազնավուրին: Շառլ Ազնավուրը մահացել էր հոկտեմբերի 1-ին, 94 տարեկան հասակում, Ֆրանսիայի հարավում գտնվող իր առանձնատանից մեկուն:

Մեծ հայորդու հրաժեշտի արարողությանը մասնակցելու համար, Ֆրանսիայի մայրաքաղաք էին ժամանել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը՝ տիկնոջ Նունե Սարգսյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ տիկին Աննա Յակոբյանի հետ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց կաթողիկոսը: Հոկտեմբերի 5-ին, Փարիզի Հաշմանդանների պալատի

«Պատվո» հրապարակում, նրանք մասնակցեցին Շառլ Ազնավուրին ազգային հարգանքի տուրքի մատուցման արարողությանը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ԱՎԱՆԴԱԿԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՏՈՆԵՑ ԻՐ ՕՐԸ՝ «ԹԲԻԼԻՍՈՒԲԱՆ»

Հոկտեմբերի 6-7-ը Վրաստանի մայրաքաղաքը տոնեց իր ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան»:

Այսուհետ, արդեն 39-րդ անգամ նշվող այս տոնը, հաջորդ էլ հաջորդած տարիներին կնշվի հոկտեմբերի առաջին շաբաթ եւ կիրակի օրերին: Այդ մասին տոնի նախօրեին հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

Ինչ վերաբերում է «Թբիլիսոբան-2018»-ին, ապա տոնի կենտրոնական վայրը Ռիդեի այգին էր, թեպետ տոնական մի-

ջոցառումներ անցկացվեցին նաև «Ղեղա-Էնայի» այգում, Առաջին համարապետության հրապարակում, Եվրոպայի հրապարակում, Մեյդանում եւ Լեղվթախելում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՎԻԹԽԱՐԻ ԱՐԺԷՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ «ԸՆԶԵՆԱՎՈՐԸ»՝ ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ԳՐՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ֆրանկֆուրտի գրքի շուկայի շաբա- քյակի վրացական տաղավարում բաց- վեց վրաց հայտնի դաշնակահարուհի Խատիա Բունիաթիշվիլու կատարումով:

Վրաստանի վարչապետի նախածե- նությամբ, «Ընձենավորը», որի կազմը պատրաստել է Ֆրանսիայում ստեղծա- գործող հայտնի քանդակագործ Գուջա Անաշուկեիին, ցուցադրվում է Ֆրանկ- ֆուրտի գրքի շուկայում որպես վրացա- կան մշակույթի եզակի նմուշ:

Հանդես գալով վրացական տաղա- վարի բացման արարողությանը՝ Վրաս- տանի վարչապետ Մամուկա Բախտաձեն նշեց, որ այսօր երկիրը վերադառնում է իր եվրոպական ընտանիք. չնայած դեռ ոչ որպես լիիրավ անդամ, սակայն որ- պես Ֆրանկֆուրտի գրքի միջազգային տոնավաճառի՝ այս կարևոր իրադարձու- քյան պատվավոր հյուր:

- Առանց որևէ չափազանցության, սա իսկապես կարելու իրադարձություն է ազգի պատմության եւ մշակույթի հա- մար,- ասաց Մամուկա Բախտաձեն՝ ընդգծելով:

- Գրքի տոնավաճառում այսօր մենք տեսանք, որ միջոցառման հիմնական «ու-

տեստը» վրացական հա- րուստ խոհանոցն է ու վրացական գինին, որի ավանդույթներն 8000 տարվա պատմություն ունեն: Այնուամենայնիվ, թույլ տվեք մի քիչ սուբ- յեկտիվ լինել այս երե- կո: Իմ կարծիքով, հիմ- նական «ուտեստը», իհարկե, վրացական մշա- կույթն է, որը բաղկա- ցած է վրացական գրա- կանությունից, թատրո- նից, պարերից ու երգե- րից, կերպարվեստից եւ ստեղծագործա- կան այլ ոլորտներից,- ընդգծեց Վրաս- տանի վարչապետը:


Իր հերթին, արտաքին եւ անվտան- գության քաղաքականության հարցերում եվրամիության գերագույն ներկայացու- ցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախա- գահ Ֆեդերիկա Մոգերինին հայտարարեց, որ որտեղ Վրաստանն է պատվավոր հյու- րի կարգավիճակում, Եվրամիության տե- ղը հենց այնտեղ է:

- Ցանկանում եմ լինել շատ անկեղծ: Միշտ այդպիսին եմ, սակայն այսօր՝ հատ- կապես, քանի որ ուզում եմ ձեզ վստա-



հել իմ սրտի խոսքը: Երբ ստացա իրա- վեր, մտածեցի, թե որքան մեծ պատիվ է ինձ շնորհել ճակատագիրը: Սակայն այ- նուհետև մտածեցի, թե ինչու ես որպես պատասխան երկու պատճառ գտա: Եր- կուսն էլ ակնհայտ են: Առաջինն այն է, որ, որտեղ Վրաստանն է պատվավոր հյու- րի կարգավիճակում, հենց այնտեղ է Եվ- րամիության տեղը:

Երկրորդն այն է, որ, որտեղ հաշվի են առնում մարդու իրավունքները ու պաշտ- պանուն դրանք, հենց այդտեղ պետք է լինի Եվրամիությունը,- հայտարարեց Ֆե- դերիկա Մոգերինին:



ԼԱՏՎԻԱ

ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՋԵՐԻ ԿՈՒԼԻՑԻԱՅԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

Լատվիայում անցկացված խորհրդարա- նական ընտրությունների արդյունքներով, պատգամավորական մանդատների է արժա- նացել յոթ կուսակցություն, այդ թվում՝ քվե- ների մեծ մասին (19,9 տոկոս) արժանացել է ռուսամետ «Սոզլախե» կուսակցությունը: 14,08 տոկոսով երկրորդ տեղում է «Ռ՝ւմ է պատկանում պետությունը»: Խորհրդարա- նում տեղ կզբաղեցնեն նաև «Նոր պահպա- նողական կուսակցությունը», «Ձարգացում» դաշինքը, «Ազգային զարգացումը», «Կանաչ- ների եւ գյուղացիների միությունը»:

Նշենք, որ ստացած ձայների քանակով «Սոզլախե» (նախորդ ընտրություններում այն ստացել էր 23 տոկոս) չի կարող ձեւա- վորել կառավարությունը: Ամենայն հավա- նականությամբ, կառավարությունը կձեւա- վորվի աջ ուժերի կոալիցիայի շնորհիվ:

ԵԳԻՊՏՈՍ

ՏՈՒԳԱՆՔ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԶՆԵՐԿԱՅԱՍԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Եգիպտոսի Ազգային ընտրական հանձ- նաժողովն ավարտում է այս տարվա մար- տին նախագահի ընտրություններում չքվե- արկած ընտրողների ցուցակների պատ- րաստումը գլխավոր դատախազություն հանձնելու համար: Ցուցակների հանձնու- մը դատախազություն իրականացվում է 500 եգիպտական ֆունտի (ամերիկյան 28 դոլա- րի) չափով տուգանքի հետագա բռնազանձ- ման համար յուրաքանչյուր քաղաքացուց, ով ընտրատեղամաս չի եկել առանց հարգե- լի պատճառի: Ընտրական հանձնաժողովի տվյալներով, ընտրություններին չի ներկա- յացել 34 միլիոն 823 հազար ընտրող ցու- ցակներում գրանցված գրեթե 60 միլիոնից: Այսպիսով, մասնակցությունը կազմել է 41 տոկոսից փոքր-ինչ ավելի:

ԻՆԴՈՆԵԶԻԱ

ԱՎԵԼԱՆՈՒՄ Է ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՐԵՐԻ ԹԻՎԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 28-ին Ինդոնեզիայի Սուլավեսի կղզում տե- ղի է ունեցել 7,4 մագնիտուդով երկրաշարժ: Ուժգին ստորգետնյա ցնցումները դարձել են ցունամիի առաջացման պատճառ, որի ժամանակ, ալիքների բարձրությունը հա- սել է 5-7 մետրի: Երկրաշարժի եւ ցունա- միի հետեւանքով, զոհերի թիվը հասել է 2010-ի, վիրավորվել է ավելի քան 10,6 հա- զար տեղացի բնակիչ, որոնցից 2,5 հազա- րի վիճակը գնահատվում է ծանր:

2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է ԳՐԵԹԵ 13 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ ԳՈՒՄԱՐՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տադրանքի ծավալը կազմե- լու է 45,1 միլիարդ լարի, իսկ 2022 թվականին ծրագրվում է այն հասցնել մինչեւ 57,9 մի- լիարդ լարիի: Ֆինանսների նախարարության կանխագ- ծումներով, 2018 թվականին հարկային եկամուտների առա- ջադրանքը կկատարվի գերա-

զանցումով, հետեւաբար, նո- րացված կանխագծումներով այն կազմելու է առնվազն 10.500,0 միլիոն լարի: 2018 թվականին նորացված կանխագծումների հիման վրա մշակվել են 2019 թվականի ցու- ցանիչները: Մասնավորապես, համախառն ներքին արտադ- րանքի աճը կանխագծված է 24,8 տոկոսի չափով, ինչը կազ-

մելու է 11.200,0 միլիոն լարի: Հարկային եկամուտների կանխագծային ցուցանիշը կազ- մել է 3.365,0 միլիոն, որից պե- տական բյուջեի բաժինը կազ- մում է 3.115,0 միլիոն լարի: Բյուջեի նախնական տար- բերակում բյուջետային ծախ- սերը սահմանված են 11.268,2 միլիոն, դրամաշնորհները՝ 96,5 միլիոն, իսկ վարկերը՝ 1.365,0

միլիոն լարիի չափով: Բյուջետային ծախսերի ընդ- հանուր ծավալից 3.773,1 մի- լիոն լարին նախատեսված է սոցիալական ապահովության, 1.473,8 միլիոնը՝ աշխատա- վարձի համար: Բյուջեի նախագծում նա- խատեսված է պետական պարտքի 933,9 միլիոն լարի- ով նվազեցում:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽՎՈՒՄ Է ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ



2019 թվականից փոխվում է համընդհանուր առողջապահության ծրագրով ֆինանսավոր- ման սկզբունքը:

Այն քննարկ- վեց Վրաստա- նի առող- ջապահության նախարարության կող- մից կազմակերպված եւ առողջապա- հության միջազգային կազմակերպու- քյան կողմից աջակցության արժանա- ցած աշխատանքային համդիպմանը: Ինչպես նշեց առողջապահության նախարար Դավիթ Սերգեենկոն, բժշկա- կան սպասարկման վճարման նոր համա- կարգը իրենից ներկայացնում է DRG մո- դել, այսինքն՝ սակագինը համապատաս- խանելու է հիվանդության ախտորոշմա- նը, հիվանդի տարիքին, հոսպիտալաց- ման տեւողությանը եւ մյուս չափորոշիչ-

ներին: Նոր համակարգի հնարավորու- քյունների եւ հավանական արդյունքնե- րի մասին աշխատանքային հանդիպմա- նը պիլոտային կլինիկաների ղեկավար- ներին ծանոթացրին առողջապահության նախարարության ներկայացուցիչներն ու փորձագետները: DRG համակարգի ներդր- ման հարցով խորհրդատվական օգնու- քյունը Վրաստանին ցուցաբերում է առող- ջապահության կազմակերպությունը:

Նշենք, որ վերոնշյալ համակարգը ներ- կա դրությամբ գործում է աշխարհի մի շարք երկրներում:

ՎՐԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՉՈՒՐԱՔ ԱՐԱՇԻՉԵ. «ԲՈԼՈՐԸ ՔԱԶԱՏԵՂՅԱԿ ԵՆ, ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՏՆԿԵԼ ՓԱՎՈՒՂՈՒՄ»

- Թբիլիսին չի գնում մեզ հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման: Նա շարունակում է մեր դեմ գործել միջազգային ասպարեզում, մասնակցում է ՆԱՏՕ-ի Ռուսաստանի շրջափակման ռազմավարու- քյուններում: Զգուշացնում ենք մեր վրաց գործընկերներին, որ մեզ վարքը սպառնալիքի տակ է դնում հարա- բերությունների կարգավորմանն ուղղված՝ 2012 թվականին սկսված գործընթացը, որի արդյունքները օգտավետ են երկու երկրների քաղաքացիների համար,- նման հայտարարությամբ հանդես է եկել այս օրերին Ռուսաստանի արտաքին գործերի փոխնախարար Գիորգի Կարասինը:

Մեկնաբանելով Գ.Կարասինի հայտարարությունը՝ Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Ռու- սաստանի հետ հարաբերություններում Ջուրաբ Աբաշի- ձեն հայտարարեց, որ այդ հարցում ակնհայտորեն շեշ- տը սխալ է դրված: Այն, թե ինչն է Վրաստան-Ռուսաս- տան հարաբերությունների փակուղու պատճառը, Գ.Կարասինը քաջատեղյակ է: Վրաստանի վարչապետը ՄԱԿ-ի ասամբլեայում հատակ եւ սկզբունքային գնահա- տականներ տվեց վրաց-ռուսական հարաբերություննե- րին եւ նշեց, որ վրացական կողմը շահագրգռված է փա- կուղու հարթափարման հարցում, որ դա անմիջականո- րեն առնչվում է Վրաստանի տարածքային ամբողջակա- նության վերականգնման հետ: Ինչ վերաբերում է Կա-

րասինի հարցազրույցի այն հատվածին, որտեղ խոսքը վերաբերում է երկու երկրների միջև տրամապորտային կապերին, առեւտրական հարաբերություններին, զբո- սաշրջության հոսքի ավելացմանը, դա իրոք այդպես է: Հուսով եմ, որ համապատասխան ժամանակահատվա- ծում մենք կկարողանանք դուրս գալ այդ փակուղուց, որի մեջ հայտնվել են վրաց-ռուսական հարաբերությու- ները,- հայտարարել է Ջուրաբ Աբաշիձեն:


Իր վերոնշյալ հարցազրույցում Գիորգի Կարասինն անդրադարձել է նաև Ռուսաստան-Վրաստանի միջև անայցեզրային պայմանակարգի հեռանկարներին: Նրա խոսքով, ռուսական կողմից դրա համար քաղաքական դիմակայություն չկա:

- Եթե կարգավորենք անվտանգության, ահաբեկչու- քյան դեմ պայքարի հետ կապված հարցերը, այդ դեպ- քում կներդրվի ոչուրացված պայմանակարգ եւ, հնարա- վոր է նաև անայցեզրային պայմանակարգ: Իհարկե, գե- րադասելի կլինեք, եթե մեր երկրների միջև դիվանագի- տական հարաբերություններ հաստատվեին: Սակայն, եթե դա չի ստացվում, ապա սպասելու ենք ավելի հար- մար պահի,- հայտարարել է Գիորգի Կարասինը:

Նշենք, որ Վրաստանի եւ Ռուսաստանի միջև դիվա- նագիտական հարաբերությունների բացակայությունը չխանգարեց վրացական իշխանություններին դեռելս 2008 թվականից միակողմանիորեն վերացնել այցեզրա- յին պայմանակարգը, եւ Ռուսաստանի քաղաքացիները անարգելք կարողանում են այցելել Վրաստան: Ինչ վե- րաբերում է ռուսական կողմի այդ թեմայի շուրջ արված պարզաբանումներին, ապա տվյալ պարագայում ակն- հայտ է քաղաքական կամքի բացակայությունը, ինչը եւ հարցի կարգավորման հիմնական արգելքն է:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ



ՆԱԺԱԿՈՒՅՉԵՐՈՆ ԿՈՅՆԵՆՈՒՄ ԵՎ ՆԱԺՈՆՆԵՐԸ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՑ ԾՐԱՆԿՈՑՈՆԻԱՅԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ


(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թեա Ծուլուկիանին երեւանում հանդիպում ունեցավ նաեւ իր հայ գործընկերոջ՝ Արտակ Ջեյնալյանի հետ:

Հանդիպման ընթացքում, կողմերը քննարկեցին իրավական ոլորտում երկրորդ հետաքրքրությունները մի շարք հարցեր, մասնավորապես՝ անդրադարձան երկու երկրների միջեւ դատապարտյալների փոխանակմանն առնչվող ընթացակարգերին:

Արտակ Ջեյնալյանը վրացի գործընկերոջը ներկայացրեց նաեւ պետական ծառայությունների մատուցման գրասենյակների ներդրման հայկական փորձը՝ ընդգծելով, որ ներկայումս ամբողջ Հանրապետության տարածքում սփռված 130

գրասենյակներ մատուցում են պետական մարմիններին առնչվող 67 ծառայություն, իսկ հաջորդ տարի նախատեսվում է այդ գրասենյակների թիվը հասցնել 300-ի: Թեա Ծուլուկիանին եւս ներկայացրեց պետական ծառայությունների մատուցման վրացական մոդելը, որը ներառում է 60 գրասենյակ՝ գյուղական համայնքներում եւ 20 գրասենյակ՝ մեծ քաղաքներում: Այս համատեքստում Թեա Ծուլուկիանին Արտակ Ջեյնալյանին իրավիճակ ս.թ. հոկտեմբերի 18-ին ներկա գտնվելով՝ Վրաստանի վարչապետի մասնակցությամբ Ախալքալաքիում կայանալիք պետական ծառայությունների մատուցման հերթական գրասենյակի բացման արարողությանը: Հանդիպման ավարտին, կողմերը վերահաստատել են փոխադարձ պատրաստակամությունը համագործակցության հետագա խորացման հարցում:



ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿՐԳՈՒՄ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում կատարվել են կադրային փոփոխություններ: Մասնավորապես, Վրաստանի կրթության փոխնախարար է նշանակվել Նաթիա Ջեդզեհիձե-Ջիշկարիանին, Վրաստանի Շոթա Ռուսթավելու անվան ազգային գիտական հիմնադրամի գլխավոր տնօրենի պաշտոնը կզբաղեցնի Ջվիաթ Գաբիսոնիան, ռուսոցիների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի տնօրեն է նշանակվել Բերիկա Շուկակիձեն: Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի տնօրեն է դարձել Գիորգի Վաշակիձեն, իսկ քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնը կգլխավորի Սոփիո Գորգաձեն:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆՎԱԾ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ



Գ ի - տակցելով պատասխանատվությունը՝ 2018 թվականի նախագահական ընտրության ընտրական ինքնակառավարման մարմիններին:

Քաղաքական կուսակցությունները կտրական պահանջ կառաջադրեն իրենց ակտիվիստներին խուսափել մրցակից քաղաքական կուսակցության կամ նախաձեռնող խմբի կողմից ներկայացված թեկնածուի նախընտրական հանդիպումներին լինելուց, հակաքորզության, գնահատումների եւ բանավոր ելույթների անցկացումից, մրցակից կուսակցությունների քարոզչական նյութերը վնասելուց կամ դրանց տեղակայումը արգելակելուց: Նման դեպքերում, տեղական ինքնակառավարման մարմինները ժամանակին եւ արդյունավետորեն իրականացնեն ընտրական օրենսգրքով նախատեսված միջոցները:

Տեղական մակարդակով նախընտրական քարոզարշավի հետ կապված հարցերի կարգավորման նպատակով, տեղական ինքնակառավարման մարմինները սահմանելու են համապատասխան արդարացի կարգավորումների վրա հիմնված պարտավորություններ եւ իրականացնելու դրա վերահսկողությունը, որպեսզի տեղական մակարդակով հավասար պայմաններ ստեղծվեն քաղաքական կուսակցությունների եւ ընտրական սուբյեկտների կողմից առաջադրված թեկնածուների քարոզչական նյութերի տեղակայման համար:

րությունները թափանցիկ եւ արդարացի պայմաններում անցկացնելու հարցով, հանձնաժողովը արդարացի մեխանիզմ է համարում 2013 թվականի նախագահական, 2014 թվականի տեղական ինքնակառավարման, 2016 թվականի խորհրդարանական ու 2017 թվականի տեղական ինքնակառավարման ընտրությունների համար նախընտրական ժամանակահատվածում իր կողմից ներկայացված հանձնարարականները եւ դիմում է ընտրություններին մասնակից քաղաքական կուսակցություններին, ընտրական սուբյեկտներին ու

ԴՎԱԿԹ ԾԻԾԻՆԱԶԵՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐՈՂԵՍ ՄԻԱՑԱԿ «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆԱ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Կառավարական «Վրացական երազանք»-ից հեռացված պատգամավոր Դավիթ Ծիծինաձեն միացավ ընդդիմադիր «Հայրենասերների այլանս» խմբակցությանը:



Նրա խոսքով, դա ժամանակավոր է մինչեւ դաշինքը մշտական անդամ կգտնի: Պատգամավորը նշեց, որ որոշումը կուղեգրվի էր, որպեսզի «Հայրենասերների այլանսը» չլուծարվի:

- Այսօր տիկին Իրման խմբից էլ, մինչեւ նոր մշտական անդամ գտնելը՝ մինչեւ նոր տարի, որպեսզի չկորչի ընդդիմադիր տրիբունան, տեղափոխվել «Հայրենասերների այլանս» խմբակցություն,- ասաց Դավիթ Ծիծինաձեն: Հիշեցնեք, խորհրդարանում «Հայրենասերների այլանսի»-ի գոյությունը վտանգի տակ է հայտնվել Նատո Հիեթիձեի մշված խմբակցությունը լքելուց հետո:

ԿՏՐՈՒԿ ԱՆԵԼ Ե ԲԵՆՁԻՆԻ ԳԻՆԸ

Վերջին օրերին Վրաստանում բենզինի գինը ավելացել է 5-8 թեթրիով: Փորձագետները գտնում են, որ գնի ավելացումը պայմանավորված է ոչ միայն նավթամթերքների շուկայում վավերացված արժեքների բարձրացման, այլեւ դոլարի նկատմամբ ազգային տարադրամի արժեզրկմամբ: Որպես հարցի կարգավորման միջոց՝ կառավարությանը խորհուրդ է տալիս վերանայել հեղուկ վառելիքային եւ գազի արժեքային սակագները, ինչը նրանց համոզմամբ, մշանակալիորեն կնվազեցնի վառելիքային սպառողական արժեքը:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱԿՑԻԱՆ

Վրաստանի Արդարադատության նախարարությունը երկարացրել է անձը հաստատող վկայականի անվճար տրամադրման ակցիան:

Ակցիան սկսվել էր ընտրացուցակների հստակեցման նպատակով ընթացիկ տարվա մարտի 1-ից: Ավելի քան յոթ ամսվա ընթացքում անձը հաստատող վկայական անվճար ստացել է 98,200-ից ավելի մարդ:

Արդարադատության նախարարությունը որոշում է կայացրել՝ երկարաձգել ակցիան որոշակի կարգի քաղաքացիների համար մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը:

Մոտակա երեք ամիսների ընթացքում անվճար վկայական կարող են ստանալ անչափահասները, որոնց 18 տա-

րին լրանում է մինչեւ 2019 թվականի հունվարի 1-ը: Ակցիան վերաբերում է նաեւ այն քաղաքացիներին, որոնց մինչեւ 2018 թվականի մարտի 1-ը չի տրամադրվել ինքնությունը հաստատող ոչ մի փաստաթուղթ:

Անվճար վկայականներ կարող են ստանալ նաեւ այն անձինք, որոնց վկայականներում լուսանկարները պիտանի չեն, վատ որակ ունեն կամ էլեկտրոնային տվյալների բազայում բացակայում են, լուծարված՝ անձը հաստատող փաստաթուղթ ունեն, զրանցված են առանց հասցի, ունեն իրավական ուժ չունեցող փաս-

տաթղթեր: Այն անձինք, որոնք զրանցված են երկրի իշխանությունների կողմից չվերահսկվող տարածքներում եւ չունեն ստիպողաբար տեղահանված անձի կարգավիճակ կամ լուծարված վկայական:

Մարդիկ կարող են դիմել Արդարադատության տան մասնաճյուղեր ամբողջ երկրի մասշտաբով, նաեւ Պետական ծառայությունների զարգացման գործակալության կամ հասարակական կենտրոնների տարածաշրջանային ծառայություններ: Նրանք ազատված են նաեւ լուսանկարի համար վճարումից:



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԿԵԼ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԸ

Վրաստանի հարկային օրենսգրքում կատարած փոփոխությունների արդյունքում, փոփոխությունների կիրարկման (02.08.2018-08.10.2018) օրվանից, հարկային օրենսգրքի 309 հոդվածի 37-րդ բաժնի համաձայն, 10690 հարկատուների, ընդհանուր առմամբ, մարվել է 325147262.40 լարիի չափով պարտքը: Մասնավորապես, ա) ենթակետով մարվել է 10689

հարկատուի 325146799,10 լարին, գ) ենթակետով՝ մեկ հարկատուի 463,30 լարին: Եկամուտների ծառայությունը հարկային պարտքերը մարում է ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ՝ հարկատուների դիմումի հիման վրա: Պարտքերի մարման գործընթացը շարունակվում է: Հիշեցնենք, որ վերոնշյալ փոփոխություն-

ների Վրաստանի հարկային օրենսգրքում կատարվեցին 2018 թվականի հունիսին եւ հրապարակվեցին 2018 թվականի օգոստոսի 1-ին: Փոփոխությունների համաձայն, 309-րդ հոդվածի 37-րդ բաժնի բ) ենթակետը վերացվեց, գ) ենթակետը մնաց անփոփոխ եւ ա) ենթակետը ձեւակերպվեց նոր խմբագրությամբ: ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Ե ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ 572 ՓԱՍՏ

Հոկտեմբերի 1-7-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի ղեկավարամետի կողմից, երկրի մասշտաբով իրականացվել են ստուգիչ միջոցառումներ, որի արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 572 փաստ: Մասնավորապես, եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի ղեկավարամետի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 4212 հարկատու: Ստուգման արդյունքում վավերացվել են հետեւյալ հարկային իրավախախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 106 փաստ, տնտեսական գործունեության համար հարկատուների կողմից Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման 36 դեպք, կանխիկ գումարով առետուրի ցանցում գանձարկղային սարքի անտեսման 430 փաստ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ՝ ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՃԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ ԼԻՆԵԼ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՆԴՈՒԹՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՆԱԽԱԳԱԶ

Հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրություններին մասնակից անկախ թեկնածու Սալոսե Զուրաբիշվիլին շարունակում է իր նախընտրական քարոզարշավը: Պրա շրջանակներում, նախագահության թեկնածուն հանդիպումներ ունեցավ Ռուսթավիի, Մառնեուլիի, Ծալկայի, երկրի մյուս բնակավայրերի բնակիչների հետ:



Հանդիպումներում հանդես գալով ծրագրային ելույթով՝ նախագահության թեկնածուն նշեց, որ Վրաստանը կայուն երկիր է, թեպետ տարածաշրջանում իրավիճակն ավելի ու ավելի է սրվում: Նրա խոսքով, նախագահ ընտրվելու դեպքում, ինքը ցանկանում է լինել կայունության երաշխավորը:

Վրաստանը բարդ փուլ է անցել եւ այսօր կայուն երկիր է, իսկ մեր տարածաշրջանը բարդ է եւ դառնում է առավել բարդ: Նախագահ դառնալը կայունության երաշխիք է, եւ ես ցանկանում եմ լինել այդ կայունության պաշտպանը: Չեզ չեմ կարող խոստանալ կենսաթոշակի ավելացում, քանի որ նման իրավունք չունեմ, սակայն ես խոստանում եմ, որ կդառնամ բոլորի նախագահը եւ բոլորի, բոլոր մանր խմբերի պաշտպանը: Հենց դա է նախագահի գլխավոր ուժը, որպեսզի դառնա բոլորի նախագահը եւ միավորի բոլորին,- հայտարարեց նախագահության թեկնածուն:

Սալոսե Զուրաբիշվիլին անդրադարձավ նաեւ ազգային փոքրամասնությունների համար պետական լեզվի հետ կապված հիմնախնդիրներին: Մասնավորապես, Մառնեուլիում, անդրադառնալով թեմային, նա նշեց, որ հնարավորինս ամեն ինչ արվելու է ազգային փոքրամասնությունների շրջանում վրացերենի ուսուցման մակարդակի բարձրացման համար, ինչը, ըստ Սալոսե Զուրաբիշվիլու, երկրի հասարակական կյանքին ինտեգրվելու ամենաարդյունավետ միջոցն է:

Սալոսե Զուրաբիշվիլին խոսեց նաեւ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ շրջաններում տեղեկատվության անբավարարության մասին, ընդգծելով որ դրա կարգավորումը եւս առաջընթաց քայլ է ինտեգրման ճանապարհին:

Ելույթի ընթացքում, Սալոսե Զուրաբիշվիլին անդրադարձավ նաեւ մարիխուանայի օրինակականացմանը, շեշտելով՝ «կողմնակից չեմ եւ չեմ լինի»:

Ես մայր եմ: Շատ մայրեր են ինձ մոտ եկել այս հարցով: Ես համոզված եմ, որ մեր երկրի ապագան երտասարդների ձեռքերում է, եւ ուզում եմ, որ մեր երիտասարդներն առողջ լինեն,- ասաց Զուրաբիշվիլին:

Նրա խոսքով, ամուր երկրի հիմքում ամուր շրջաններ են, այդ իսկ պատճառով էլ պետք է զարգացնել երկիրը՝ սկսելով շրջաններից:

Վերոնշյալ հանդիպումներում նախագահության թեկնածուն պատասխանեց հավաքվածների հետաքրքրող հարցերին:

ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՆԴՈՒԹՅՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՆԵՐՑԱՆՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին անցկացվելիք նախագահական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում, տարբեր կուսակցություններից եւ նախածեռնող խմբերի կողմից առաջադրված նախագահության թեկնածուները, իրենց քարոզարշավի շրջանակներում, հանդիպումներ են անցկացնում տարածաշրջանների բնակիչների հետ:


«Եվրոպական Վրաստան - Շարժում ազատության համար» քաղաքական միավորման թեկնածու **Ղալիթ Բաբրաձե**ն քարոզարշավի շրջանակներում այցելեց Քվեմո Բարթիկի տարածաշրջան, եղավ Մառնեուլիում, Ռուսթավիում, Գարդաբանիում, Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում հանդիպումներ ունեցավ Ախալցխի, Ախալքալաքի բնակիչների հետ: Քարոզարշավի շրջանակներում, «Եվրոպական Վրաստանի» ներկայացուցիչն եղավ նաեւ Գուրիայի, Իմերեթիի տարածաշրջաններում:



«Վրաստան» քաղաքական միավորման նախագահության թեկնածու **Շալվա Նաթելաշվիլի**ն, իր գործունեության շրջանակներին հավատարիմ քարոզարշավի շրջանակներում, հանդիպումներ է ունենում միայն այն տարածաշրջանների բնակիչների հետ, որտեղից նախորդ ընտրություններին «Լեյբորիստական կուսակցությունը» ստացել էր ձայների առավել քանակությունը: Գլխավոր լեյբորիստը հանդիպումներ ունեցավ Գուրիայի, Սվանեթիի, Իմերեթիի եւ մյուս տարածաշրջանների ներկայացուցիչների հետ:



Նախագահական ընտրությունների շրջանակներում, բավականին ակտիվ քարոզարշավ է անցկացնում «Ազատ ժողովրդավարներ» քաղաքական միավորման կողմից առաջադրված թեկնածու **Ղալիթ Ուսուփաշվիլի**ն: Մասնավորապես, նա հանդիպումներ է ունեցել Գուրիայի, Սամեգրեթլոյի, Իմերեթիի, Քվեմո Բարթիկի, Կախեթի երկրամասերում: «Վրաստանի Լեյբորիստական կուսակցու-



թյան» քաղաքական միավորման նախագահության թեկնածու **Գրիգոլ Վաչաձե**ն իր քարոզարշավն սկսեց՝ այցելելով Սամցխե-Ջավախեթի եւ Քվեմո Բարթիկի տարածաշրջաններ: Նա հանդիպումներ ունեցավ նաեւ Իմերեթիի, Գուրիայի, Շիդա Բարթիկի եւ մյուս տարածաշրջանների ներկայացուցիչների հետ:

«Վրաստան» քաղաքական միավորման նախագահության թեկնածու **Գրիգոլ Վաչաձե**ն իր քարոզարշավն սկսեց՝ այցելելով Սամցխե-Ջավախեթի եւ Քվեմո Բարթիկի տարածաշրջաններ: Նա հանդիպումներ ունեցավ նաեւ Իմերեթիի, Գուրիայի, Շիդա Բարթիկի եւ մյուս տարածաշրջանների ներկայացուցիչների հետ:

ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ «ԷԹԻՎԱՅԻ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում) տաթղթին: Ներկա դրությամբ, գործընթացն սկսվել է Այն ստորագրել են արդեն 20 թեկնածուները, եւ մենք սպասում ենք, որ փաստաթուղթը կստորագրեն նաեւ մնացած թեկնածուները, քանի որ այդ հարցում հասել ենք նախնական համաձայնության: Սույն փաստաթուղթը կարելի է քանի որ ընտրական մշակույթի զարգացումը, ընտրական գործընթացների աջակցությունը Վրաստանի համար նշանակալից են: «Էթիկայի սկզբունքները» հանդիսանում են հանրության շահերի պաշտպանության, բռնության, սպառնալիքի, շահարկման, մերժման եւ ատելության լեզվին չօգտագործման հիմ-

նադրույթ,- հայտարարեց Թամար Ժվանիան: Անդրադառնալով թեկնածուների կողմից «Էթիկայի սկզբունքներին» հետեւելու հարցին՝ ԿԸՀ նախագահը նշեց, - Հասարակայնությունն ինքնին է գնահատելու՝ որքանով է այս կամ այն թեկնածուն պահպանում «Էթիկայի սկզբունքները»:

ը կարելի է, քանի որ ընտրական մշակույթի զարգացումը, ընտրական գործընթացների աջակցությունը Վրաստանի համար նշանակալից են: «Էթիկայի սկզբունքները» հանդիսանում են հանրության շահերի պաշտպանության, բռնության, սպառնալիքի, շահարկման, մերժման եւ ատելության լեզվին չօգտագործման հիմ-

նադրույթ,- հայտարարեց Թամար Ժվանիան: Անդրադառնալով թեկնածուների կողմից «Էթիկայի սկզբունքներին» հետեւելու հարցին՝ ԿԸՀ նախագահը նշեց, - Հասարակայնությունն ինքնին է գնահատելու՝ որքանով է այս կամ այն թեկնածուն պահպանում «Էթիկայի սկզբունքները»:

ՎՐԱՍԱՊ

Ո՞Վ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ

Սահմանադրության մեջ մտցված փոփոխություններից հետո, 1018 թվականի հոկտեմբերի 5-ին հաստատվել է, որ Վրաստանում գյուղատնտեսական հողերի սեփականատեր կարող են լինել միայն Վրաստանի քաղաքացիները կամ պետությունը: Օրինագիծը, որը համապատասխան սահմանադրական գրառումից հետո պետք է սահմանի բացառություններ, արդեն պատրաստ է, սակայն այն դեռեւս չի ներկայացվել խորհրդարան:

Օրինագիծը սահմանում է, թե ով կարող է Վրաստանում հողատարածք ունենալ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կարող են լինել.

- ա) պետության, Ինքնավար Հանրապետության, մունիցիպալիտետի սեփականությունում,
- բ) Վրաստանի օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Վրաստանի հանրային իրավունքի իրավաբանական անձի սեփականությունում,
- գ) Վրաստանի քաղաքացու սեփականությունում,
- դ) Վրաստանում գրանցված մասնավոր իրավունքի իրավաբանական անձի սեփականությունում, եթե իրավաբանական անձի գերիշխող գործընկերը շահառու սեփականատերն է,
- ե) Միավորումների/ընկերակցությունների սեփականությունում, որոնք գրանցված չեն որպես իրավաբանական անձ, եթե անդամների մեծամասնությունը կազմում են սույն կետի «ա» եւ «ե» ենթակետերով նախատեսված անձինք:



Միևնույն ժամանակ, գյուղատնտեսական հողերը կարող են լինել.

ա) օտարերկրացու սեփականությունում, եթե նա ժառանգությամբ է ստացել այն կամ եթե «Ֆիզիկական եւ մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց տիրապետման (օգտագործման) տակ գտնվող հողամասերի սեփականության իրավունքի ճանաչման մասին» Վրաստանի օրենքով սահմանված կարգով, նա իրավունք ունի օրինականորեն տիրապետել (օգտագործել) գյուղատնտեսական նշանակության հողերը:

բ) Վրաստանում գրանցված մասնավոր իրավունքի իրավաբանական անձի սեփականությունում, եթե գերիշխող գործընկերը օտարերկրացի է կամ/եւ արտասահմանում գրանցված իրավաբանական անձ է:

Կոմերցիոն բանկի առնչությամբ, միկրոֆինանսական կազմակերպության եւ ապահովագրական կազմակերպության հիմնված միջազգային ֆինանսական սահմանակարգին համապատասխան ու սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, սույն օրենքով սահմանված սահմանափակումները չեն տարածվում, եթե գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա իրավունքն առաջանում է միջազգային ֆինանսական սահմանակարգի, բանկային գործունեության, միկրոֆինանսական գործունեության եւ Վրաստանի օրենսդրությամբ սահմանված ապահովագրական գործունեության արդյունքում:

Ի՞նչպես ստանալ օրինական տիրապետման իրավունքը: Այն ստանալու համար, օտարերկրացուն հարկավոր կլինի Վրաստանի կառավարության որոշումը: Եվ դրա համար նա կառավարությանը պետք է ներկայացնի ներդրումային ծրագիր: Եթե ծրագրում նախատեսված պայմանները չկատարվեն, օտարերկրացին պարտավոր է վաճառել այդ հողամասը 1 տարվա ընթացքում: Մշտական բնակության թույլտվություն կամ ներդրումային կացության թույլտվություն ունեցող այլ երկրի քաղաքացին, եթե չմշակի հողամասը, պարտավոր է 2 տարվա ընթացքում վաճառել հողամասը (բացառությամբ՝ տնամերձ հողամասի):

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԿԱՆԻՇ

ՊԱՏՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Կոռուպցիայի դեմ պայքարում Վրաստանը առաջ է անցել ինչպես հարևան, այնպես էլ՝ ԵՄ-ի մի շարք երկրներից:

Ըստ Համաշխարհային բանկի (ՀԲ) 2017-ի «Կառավարման համաշխարհային ցուցանիշները» հետազոտության, Վրաստանը կոռուպցիայի վերահսկման ցուցանիշով 0-ից 100 սանդղակում 77,4 միավոր է ստացել՝ պատմական ցուցանիշ գրանցելով 1996 թվականից ի վեր: Այսպիսով, Վրաստանը կոռուպցիայի դեմ պայքարում առաջատար երկրների ցանկում է, առաջ է անցնում Մալթայից, Լեհաստանից, Չեխիայից, Լատվիայից, Լիտվայից, Իսպանիայից, Սլովակիայից, Իտալիայից, Խորվաթիայից, Հունգարիայից, Ռումինիայից, Հունաստանից եւ Բուլղարիայից: Վրաստանն այս ցուցիչով գե-

րագանցել է նաեւ անմիջական հարևաններին. Թուրքիան հավաքել է 49,5, Հայաստանը՝ 32,6, Ադրբեջանը՝ 17,7, իսկ Ռուսաստանը՝ 17,3 միավոր: Վարկանիշի առաջատարներն են. Նոր Զելանդիան՝ 100, Ֆինլանդիան՝ 99,04 եւ Սինգապուրը՝ 97,6 միավոր: «Կառավարման համաշխարհային ցուցանիշները» հետազոտությունը երկրների կառավարման առաջընթացը գնահատում է 6 ցուցանիշով՝ օրենքի ուժ, ձայնի իրավունք եւ հաշվետվողականություն, քաղաքական կայունություն, կառավարման արդյունավետություն, կանոնակարգման որակ եւ կոռուպցիայի վերահսկում: ՄԻՄՆ ԿԻԱԶԵ